գումարտակով յետ շպրտեց վրաց զօրքերը Հախպատի և Ախտովայի միջև և գրաւեց 2 գնդացիր։ Ռոտմիստր Փիրումեանի հարիւրեակը քշեց վրացի-ներին և գրաւեց Լալւար սարը՝ գրաւելով 2 գնդացիր և գերելով 15 վրացի-ներ։ Գիշերւայ ժամը 2-ին հայ կամաւորները ռումբերով պայթեցրին զրահապատներից մէկը։ Լուսաբացին գնդ. Տէր-Նիկողոսեանը գրաւեց Միխայլովկա գիւղը և առաջ ուղարկեց խուզարկուներ։

Դեկտ. 14-ին և 15-ին հայ զօրքերի յառաջխաղացումը անցաւ շատ յաջող։ Նրանց ճնշման տակ վրացիները պարպեցին և Ալլահվերդին։ Դեկտ. 16-ին, լուսաբացին, գնդ. Տէր-Նիկողոսեանի ուժերը անցան յարձակման՝ գրաւելու համար Բոլնիս-Խաչէն-Եկատերինֆելդը։ Նոյն օրը, առաւօտեան, Կորոլկովի Հայրումի խումբը, մի խիստ յաջող շարժումով, ոչնչացրեց վրացական մի գունդ և գրաւեց Հայրում կայարանը։ Վրացիներից զերի ընկան 12 սպաներ գնդ. Վաչնաձէի գլխաւորութեամբ և 300 զինուորներ։ Մօտ 200 հոգի սպանուեցին ու վիրաւորուեցին, միւսները փախան։ Մեր կողմից սպանուեցին տեղակալ Մուկուչ Տէր-Յովհաննիսեանը և մի զինուոր, վիրա-ւորուեցին 7 հոգի։ Տէր-Նիկողոսեանի և Նեստերովսկիի զօրամասերը շարու-նակեցին ճնշել վրացիներին դէպի հիւսիս։ Վրաց կողմից սկսեցին երևալ Թիֆլիսից հասած թարմ ուժեր։

Դեկտ. 17-ին արևելքից գլխապետ Թարվերդեանի ու արևմուտքից Փիրումեանի խիզախ գրոհով ջարդ ու փչուր եղան 5րդ և 6րդ վրացական գնդերը և զվարդիայի ու սահմանապահ գումարտակները։ Գրաւեցին 2 հաւրիցներ, 2 դաշտային թնդանօթ, 25 գնդացիր և Ախթալա կայարանի մօտ 2 կազմ ու պատրաստ զրահապատ գնացքներ, որոնք տեղն ու տեղը գործադրութեան դրեցին հակառակորդի դէմ։ Վրացիները ցոյց տուին կատաղի դիմադրութիւն և կուի դաշտը թողին 60 դիակ։ Վրաց ճակատի հրամանատար զօր. Ցուլուկիձէն, բոլորովին ջախջախուած, հապճեպով փախաւ Հայրում—Սադախլու գիծը՝ հայերի ձեռքը թողնելով նոյնիսկ իր վագոնը մէջի իրերով։

Մերոնք շարունակեցին յառաջխաղացումը. Կորոլկովի զօրասիւնը մօտեցաւ Սադախլուին և կուի բռնուեց թշնամու հետ։ Դեկտ. 18-ին, առաւօտեան, գնդ. Տէր-Նիկողոսեանը գրաւեց Բոլնիս-Խաչէնը։ Կուի պայ-մանները շատ ծանր էին. ձիւն, ցուրտ, հագուստի ու սնունդի պակասու-թիւն։ Բայց և այնպէս զօրքի տրամադրութիւնը բարձր էր։ Երբեմն ճակա-տամարտները ստանում էին արիւնահեղ բնոյթ, տեղի էին ունենում կատաղի սուինամարտներ։ Ախթալա կայարանի մօտ, ուր գրաւեցին զրա-հապատները՝ 4րդ գնդի առաջին և երրորդ վաշտերը արագ ու վճռական հարուածով խփեցին թշնամուն և սուիններով խուճապային փախուստի մատ-նեցին։ Զախ թևի վրա, օգնական ուժեր ստանալով, վրացիները դիմեցին հակադրոհի Բոլնիս-Խաչէնի վրա, բայց մերոնց սպանիչ կրակի տակ՝ փախան դէպի Արուխլու գիւղը։